

203 6

Կ - 14

ՀԱՄԱՊՈՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՏՕՆԵՐՈՒՆ
ՎԵՐԱՑ

Ի ՊԵՏՈ ԺԽԱԿԱՆ ԵՐԿԱԽՈ ԴՊՐՈՑԱՑ ԱԶԳԻՄ

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Լ

Ի ՄԻՆԱՍ ՔԱՀԱՆԱՅԻ ՓԱԽԱԼԱՆ

Ի միաբանէ Սուրբ Համբարձման եկեղեցւոյ Նոր-
Նախիջեան քաղաքի:

ՅՈՒԽՈՒՑՁԵ ԿՐՈՆԱԳԻՑՈՒԹԵԱՆ ՕՐԻԱՐԴՅԱՆ ԴՊՐՈՑԻ:

825

Ո-ԾՈՒՎ. ԴՕՒ ՎԵՐԱՑ

ՏՊԱՐԱՆ Ա. ՏԵՐ-ԱԲՐԱՍ ԱՄԵՐԻԿԱ

1900

2036
4-14

ՀԱՄԱՊՈՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱՑ

Ի ՊԵՏԱ ԺԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՐ ԴՊՐՈՑՍՑ ԸԶԳԻՍ

2954 1000
295057

ՅՕՐԻՆԵԱԼ.

Ի ՄԻՆԱՍ ՔԱՀԱՆԱՅԻ ՓԱԽԱԼԵԱՆ

Ի միաբանէ Սուրբ Համբարձման եկեղեցւոյ Նոր-Նախաջևան քաղաքի:

ՅՈՒԽՈՒՅՉ ԿՐՈՆԱԴԻՑՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ:

4 2001.



12310

2012


ՏԱՐԱԿԻՄ ԱՀԱ ՀԱՅՈՒ ՀԱՅՈՒ ԴԱՅԱՆԱՑ ԱՅԱՑ.

ՀՐԱՄԱՆԱԿ


S. S. U Կ Ր Տ Զ Գ Ի Ա.

ՎԵՀՇՓԱՄ ԵՏ ՄՐՑԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Дозволено Цензурою, С.-Петербургъ, 18-го Июня 1899 г.



Л.С.С.Р.
Министерство здравоохранения СССР
78324-бг
1977-87



Ա Զ Գ Ի:

Ի Ց Ւ Շ Ա Տ Ա Կ

Հոգւոյ հանդուցեալ Ուսուցչի և բարերարի իմայ
Տեառն

ԳԱԲՐԻԵԼԻ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ:

1899 ամի
Հոկտեմբերի 5-ն
Եւսպենի վաճառքան:

Թէե մեր ծիսական եկեղեցական դպրոցներուն մէջ կրօնի դասախոսութիւնը կլինի Ազգիս եկեղեցական դպրոցներու կանոնադրութեան համաձայն, բայց պատուարժան կրօնուսոյց վարժապետներն չեն հաղորդեր իւրեանց սաներուն մասնաւոր կարեոր տեղեկութիւններ Հայաստանեայց եկեղեցւոյ կատարած տօներուն վերայ, թերես առ ձեռն ձեռնակներ չունենալնուն համար, ուստի այս թերութեան առաջն առնելուն նպատակաւ աշխատեցայ ըստ կարելոյն յօրինել այս համառօտ գրքոյ-կըս և տպագրութեամբ ի լոյս ընծայել իբրե առձեռն հրահանգ աշակերտաց ձեռք տալու, որքան կարելի էր դիրքին և հասկանալի ոճով գրուած, որպէս զի աշակերտք առանց կողմնակի օգնութեան վարժապետաց դիրքաւ կրնան հասկանալ և ըմբռնել Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօներուն և Սրբոց տօնակատարութեանց համառօտ նշանակութիւնը ըստ ամենայնի համեմատ մեր սուրբ եկեղեցւոյ առաքելաչնորհ Հայրապետաց և վարդապետաց կարգադրութեանց և բացատրութեանց:

Մինաս Քահանայ Փափալեան:

ՏՕՆԵՐ ԵՒ ԿԻՒՐԱՎԵ ՈՐԵՐ:

Ա.

ՏԵՇԵՐՈՒ ՆՀԱՆՈՒՄՆԵՐՆԵՐ ՈՒ ՔԱԺՈՒՆՈՒՆԵՐՆԵՐ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.

Տօնն է Աստուծոյ նուիրուած հանգստեան օրը՝ յորում մարդիկ Աստուծմէ ընդունած մեծամեծ անչափ բարիքները յատկապէս կրիառաբանեն և կամ նըշանաւոր սրբոց յիշատակը կրկրկնեն։ Մարդիկ տօն օրերուն պարտական են միայն Աստուծոյ ծառայել, ազատ մնալով անձնական շահուց վերաբերեալ մարմնական գործերէ, թէև հասարակ օրերուն ևս ազատ պիտի չհամարեն իրենք զիրենք Աստուծոյ ծառայելէ հեռի պահել։

Սուրբ եկեղեցին տօները սահմանած է յետագայ նպատակաւ. Ա. որպէս զի աշխարհային կենաց զանազան հոգսե-

րուն և վշտերուն մէջ մեր հոգին Աստուծով հանգչի և մխիթարուի. բ. որպէս զի Աստուծոյ մեղի արած երախտիքները ընթերցասերինք ու նորա փոխանակ մեր կարողացածին չափով չնորհակալ լինիմք. Դ. որպէս զի եկեղեցւոյ երեւելի և նշանաւոր անցքերը յաւերժացնեմք Դ. որպէս զի սուրբերը յարգեմք և մեր սրտի մէջ անոնց նմանելու սէր և աշխայժ զարթուցանեմք. Ե. որպէս զի ետ կենալով մարմնական աշխատանքներէ հանգչեմք անձամք, ու ընկերականութեան քաղցր զգացմոնքներով հանգերձ առ Աստուած ունեցած պարտքերնիս կատարեմք:

Տօն օրերը սուրբ պահելու համար, նախ պէտքէ հեռու կենալ աշխարհիս մարմնաւոր զբազմունքներէն և պարապիլ միայն հոգեշահ գործերով, ապա պէտք է աշխատել ունենալու այն մըտաւոր ուղղութիւնը և սրտի զգացմոնքը, զորս տօնին յիշատակը մեր մէջ կզարթեցնէ: Կան տօներ, որոնք մեր

մէջ կզարթուցանեն միայն ապաշխարութեան և զղջման զգացումն, միքանին ուրախութեան զգացումն, միքանին նեղութեան և վշտի համբերելու զգացումն և միքանին ալ գիտութեան և ողորմածութեան զգացումն դէպի մեր ընկերները որ կարօտ են մեզ: Այսպէս տօներուն զիխաւոր օգտակարութիւնն է զարթուցանել մեր որտերուն մէջ եռանդն և սէր պարապելու Աստուծոյ հաճոյ գործերով: Ոսկերերան սուրբ Յովհանն Հայրապետը կասէ: „Եմենամեծ տօնը մաքուր խղճմտանքն է“ և ըստայսմ մինչև ցայժմ մեր ազգը հետեւելով նախնեաց բարի օրինակին՝ մեծամեծ տօներուն կապաշխարհին և կհաղորդուին Քրիստոսի Տեառն մերոյ փրկարար մարմնոյն և անապական արեանը:

Տօները կը բաժանուին ըստ յիշատակին. Տէրուն Մարտիրոսաց, ազգային եկեղեցական, ըստ ժամանակին՝ անշարժ և շարժական:

Տէրունական տօներ կը կոչուին

անոնք որոնք Քրիստոսի տնօրէնութեան
մի Աստուածութեան, Եմենասուրբ Եղբ-
րորդութեան խորհրդոյն կը վերաբե-
րին և Քրիստոսի Աստուծոյ մարդե-
ղութեան յիշատակին նուիրուած են
զիխաւորապէս հետեւալներն են, Եւե-
տումն, Ծնունդ և Աստուածայայտնու-
թիւն Քրիստոսի. Մկրտութիւն, Տեառն
ընդ առաջ, Չարչարանք, Խաչելութիւն
և Թաղումն Քրիստոսի, Ծաղկազարդ,
Յարութիւն, Յինունք, Քառամսօրեայ
երեւումն, Համբարձումն, Հոգւոյն Արքոյ
զալուստն, Ելլակերպութիւն, կամ պայ-
ծառակերպութիւն, Յղութիւն Սուրբ
Աստուածածնայ իյլննայէ. Ծնունդ
Սուրբ Աստուածածնայ, Ծնծայումն երից
իմաց ի տաճարն, Գիւտ գոտուայ Սուրբ
Աստուածածնայ. Աերափոխումն Ես-
տուածածնայ, Աերացումն Սուրբ Խաչի,
Գիւտ Խաչի, և Աշրագայ Սուրբ Խաչի
յիշատակին:

ՄԱՐՏԻՐՈՍԱՅ կը կոչոին այն տօները,
որոնք ձշմարիտ Յստուածապաշտու-

թեան և Վրիստոսի՝ Որդի Աստուծոյ, Աստուած լինելուն դաւանութեան վերայ արեամբ չափ ճգնող հաւատացեալներու նահատակութեանը և սրբութեանը նուիրուած են, սոքա են Նահապետաց, Մարգարէից, Առաքելոց և նոցա աշակերտներուն տօնելը, որոց կարգին կը տօնենք նաև Երկնային զինուորութեանց կամ հրեշտակաց տօնը:

Ազգաթիւն Եկեղեցական կըկոչուին այն
սրբոց տօները. որոց ջանքն և նահատա-
կութիւնը յատկապէս պատճառ եղած
էն Հայաստանէայց սուրբ Եկեղեցւոյն
հաստատութեան, ինչպէս էն Թաղէոս
և Բարդուղիմէոս առաքելոց տօնը, Եր-
գարու և Սանդիւտոյ տօնը, Ղսկեանց
Սուքիասեանց, Հոխիսիմեանց և Գայ-
եանեանց տօները, Արքոյն Գրիգորի Լու-
սաւորչի, Նորա որդուոց և թռունաց տօ-
ները, Տրտատ թագաւորին, Թարգման-
չաց, Պետոնդեանց, Ըստվմանց և այլ
աղքային նահատակաց տօները, նաև
Շօղակաթ Սուրբ Խջմիածնի և նաւա-
կատիք Սուրբ Խջմիածնի տօները:

Քրիստոնէութեան առաջի դարերէն ի
վեր, Ապրելի 7-ին:

Եւետեաց տօնի յիշատակը տօնելով
կրկարդամք Սուրբ Եւետարանի մէջ
այն հատուածն, յորում Եստուծմէ խըր-
կուած հրեշտակապետը բոլոր մարդկան
ազգի փոխանակ Սուրբ Կուսին կաւետէ,
թէ Օծեալ փրկիչը պիտի ծնանի իրմէն,
յորում բերկրեալ կանուանէ զՍուրբ Կոյ-
սին, նմանացուցանելով զնա Եւայի ան-
մեղութեան կեանքին՝ երբ դրախտին
մէջ Եստուծոյ տեսութեամբն կըզուար-
ձանար, և թէ ինչպէս կեանք էր Սուրբ
Կուսին կեանքը, կը սովորեմք, և բերկ-
րեալ լինելու ճանապարհին հմուտ կը
լինիմք, միևնոյն ժամանակ Եստուծոյ
վերայ ունեցած հաւատքնիս կըզօրա-
ցնեմք, յուսալով թէ նորա իւստումն
անդառնալի է ըստ ողորմութեան Նորա:

Եւետումէն անմիջապէս ինն ամիս
ետքը որ է Յունվարի 6-ը Յիսուս
ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն Ռեթղե-
հէմի այրին մէջ մարդկային ազգի փըր-

Բ.

Տէրունի առեւբ.

ԱԻԵՏՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄՈՒ.

Երբ Սուրբ Կոյս Մարիամ մենակ
իւր տան մէջ աղօթք կանէր, Եստուծոյ
հրամանաւ Գաբրիէլ հրեշտակապետը
երեւեցաւ նորա և աւետիս տուաւ թէ
որդի պիտի ծնանի Հոգւով Սրբով:
Սուրբ Կոյս Մարիամ այս աւետիքը լը-
սելով հրեշտակապետին առաջի անզամ
շփութեցաւ, բայց յետոյ քաջալերուելով
նոյն իսկ հրեշտակապետի խօսքէն՝ հե-
զութեամք պատասխանեց. „Եհաւասիկ
կամ աղախին Տեառն, Եղիցի ինձ ըստ
բանի քում;“ և անմիջապէս նոյն րո-
պէին կատարեցաւ Քրիստոսի մարդե-
ղութեան տընօրէնութեան սկիզբն աշ-
խարհիս փրկութեան համար: Մեր եկե-
ղեցին այս տօնը անշարժ կըկատարէ

կութեան համար: Յիսուսի Քրիստոսի
մարդանալովը՝ մարդիկ Աստուածատես
եղան, որովհետև մարդիկ զԱստուած չէ-
ին կարող տեսնել առանց նորա մար-
դանալոյն: Եյս Աստուածայայտնութեան
յիշատակը տօնելով՝ կը կարդամք Յի-
սուսի ծննդեան պատմութիւնը և նոյն
ժամուն կատարուած սքանչելիքները,
որով կը սովորեմք, երբոր Աստուած մարդ-
կանց հետ լինի, մարդիկ հաւասար եղ-
բայրներ կը լինին, և աղքատ հովիւներն
ու մեծամեծ թագաւորներն միւնոյն
արժանաւորութեամք Աստուծոյ փառքը
կը վայելեն, և միւնոյն կերպով ընծա-
ներ կը մատուցանեն ու Աստուած մի-
ւնոյն կերպով կը նդունի թէ՝ թագաւ-
որներուն ընծայն և թէ հովիւներունը,
նոյնպէս կը սովորեմք, թէ Աստուծոյ
առաջեւը հաւասար եղող մարդիկն հրեշ-
տակաց պէս կօրհնեն զԱստուած և հրեշ-
տակաց փառքին և սրբութեանը մաս-
նակից և հաղորդ կլինին: Յիսուսի ման-
կութենէն մինչև կատարեալ հասակն

իբրեւ մարդ անցուցածն կեանքն մեզի
օրինակ և ուղեցոյց առնելու կը յոր-
դորուիմք:

Քրիստոս Տէրն մեր Յորդանան
գետի մէջ մկրտուեցաւ Յովհաննէս
Մկրտչէն երեսուն տարեկան հասակն
մտած օրը: Մկրտութեան ժամանակ
երկինքը բացուեցաւ և Հոգին Սուրբ
աղաւնիի կերպարանքով իջաւ Յիսուսի
վերայ և Հօր Աստուծոյ ձայնը լսուե-
ցաւ „Դա է Որդի իմ սիրելի ընդ որ
հաճեցայ:“ Եյս հրաշքը կատարուեցաւ
Հրէից ազգին բազմութեան առջեւը,
որպէս զի յայտնի իմացուի թէ Յով-
հաննու Մկրտչի բարողած Միսիայն
ինքն Քրիստոս է: Մկրտութիւնը մեր
եկեղեցին կը կատարէ ծննդեան հետ
միւնոյն օրը Յունվարի 6-ին: Առաքե-
լոց օրերէն սկսած մինչև հինգերորդ
դարուն վերջերը ամեն քրիստոնեայ ազ-
գերն ալ մկրտութեան տօնը ծննդեան
տօնին հետ Յունվարի 6-ին կրկատա-
րէին, ըստ որում Յիսուսի Մկրտու-

թիւնը ճիշտ Յունվարի 6-ին եղած է, ինչպէս որ Սուրբ Աւետարանի խօսքն ալ կը հաստատէ. Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև իրենից սկսեալ Ղուկ. գ. 23.

Այս տօնին Աստուածայայտնութիւն ըսուելու պատճառն այս է. Նախ Աստուածոյ հրեշտակը Յիսուսի ծնունդը գիշերով յայտնեց հովիւներուն, որոց վերայ փառաւոր լոյս ծագեցաւ և երկնը էն հրեշտակաց խումբ մը իջաւ և զԱստուած օհնելով երգեցին. „Փառք ի բարձունա.“ Երգը. Մրեւելքն մոգերը աստղի առաջնորդութեամբ եկան Շեթղեհէմ և նորածին մանուկ թագաւորին երկրպագութիւն արին. Երկրորդ՝ Ակրտութեան ժամանակ Յիսուս Յորդանան գետէն ելլելէն ետքը չայր Աստուած յայտնեց. „Դա է Որդի իմ սիրելի.՝ ասելով՝ նոյնպէս և չողին Սուրբ աղաւնակերպ իջաւ նորա վերայ՝ ինչպէս որ Յովհաննէս Ակրտիչ մարգարէացել էր, որով և յայտնուեցաւ Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը, մինչդեռ

ծննդեան տօնին եղած տեսիներումն միայն Յիսուսի Աստուած լինելը կը յայտնուէր, Ակրտութեան ժամանակ երեքանձնեայ միաստուածութիւնն յայտնուեցաւ:

Ակրտութեան տօնը կատարելով կը յիշեմք Աստուածոյ ստեղծած մարդոյն անմահութիւնը և անմահացունող կենաց ծառոյն պառուղը, և թէ նախածնողքն Աղամ և Եւա Աստուածոյ մէկ հատիկ պատուէրը չպահելով զրկուեցան կենաց ծառոյն պտուղէն և իրենց անմահ կեանքը կորսնցունելով ապականացու և մահկանացու եղան մարմնով։ Աստուած իւր անհուն գթութեամբը ու ողորմութեամբը ստրջացած մարդոյն ապաշխարութիւնը ընդունելով՝ սահմանեց որ մարդը վերատին ծնանի հոգւով ինչպէս որ կը մաքրուի կրակով, որպէս զի մահկանացու մարմինն իւր ապականութենէն ետքն՝ վերատին յարութիւն առնէ մեռելութենէն անապական մարմնով՝ յանմահ կեանս։ Աստու

ծոյ այս գաղտնի տնօրէնութիւնը՝ որ
վերջը յայտնեց Յովհաննէս Մկրտչի բե-
րանով, կատարեց Յիսուս Քրիստոս ի
Յորդանան ջրով մկրտուելով ապաշխա-
րութեան և հոգուով անմահութեան, ո-
րով Յիսուսի զգեցած մարդկային հո-
գին ու մարդկային մարմինն յապակա-
նութենէ յանապականութիւն փոխուե-
լով, երեքօրեայ թաղմանէն ետքը՝ մե-
ռելութեան գերեզմանէն յարութիւն
առաւ։ Այսու ամեն հաւատացեալ աս-
տուածապաշտներուն աւանդեց այս սը-
բարար խորհուրդը, որով ձշմարիտ քրիս-
տոնեաներն հոգուով և հրով սրբուելով
և ապաշխարութեան ջրով մաքրուելով
գերեզմանէն յարութիւն առնելուն և
կենաց փայտի կեանքին և Աստուծոյ
որդի լինելու շնորհըն ունենան։ Մը-
կրտութեան տօնն կատարելով կը սովո-
րիմք այն խորհուրդը, և կը թելա-
դրուիմք Աստուծոյ որդեգրութենէն չօ-
տարանալու կեանք մի անցունել և Աս-
տուածաիրութեան, ընկերսիրութեան

պատուիրանքին դէմ մեղանչող խոր-
հուրդներէ, խօսքերէ և գործքերէ մի-
անգամայն զգուշանալու կը զօրանամք
և այս մահացու կենաց օրերուն ևս
ընկերսիրութեան քաղցրութիւնն ու
բերկրանքը կը վայելեմք և յարութեան
յուսով լցուած, Աստուծոյ տեսոյն և
փառաց ցանկութիւնովը վառուած, ան-
մեղութեան, բարութեան և մեծանձնու-
թեան հոգեկան կեանք մի կանցունեմք։

Քրիստոս Տէրն մեր ծնանելէն ութ-
օր Ետքը Թլիփատուեցաւ Աստուածա-
շունչ զբոց պատուիրանին համեմատ,
ինչպէս որ Երրհամու սերունդին և Աս-
տուծոյ ուխտին նշանակուած էր և ա-
նունը գրին Յիսուս. ինչպէս հրեշտա-
կէն պատուիրուած էր, որ Փրկիչ ասել
է, Օծեալ Տէր։ Այս տօնը կը կատա-
րուի միշտ ծննդեան ութերորդ օրը որ
է Յունվարի 13-ին։

Թլիփատութեան տօնը կատարելով
կը յիշեմք Աստուծոյ ուխտը, զոր ուխ-
տեաց Երահամու որդւոցն պատուիրե-

լով նոցա, որ Քանանացի և հեթանոս
ազգաց գաղանային և անասնական
կրքերէն յետ կենան և Վստուծոյ Ճա-
նապարհն ուղիղ ընթանան։ Կաե կը
յիշեմք թէ առաքելոց ժողովն որոշեց
որ Հաւատացեալները չը թլփատուին,
այլ մլրտուին և միայն զգոյշ կենան
կուց զոհելէ, արիւն Հանելէ և պր-
ոնկութենէ, ըստ որում Քրիստոսի
փրկութեան չնորհքն Հաւատացեալ
քրիստոնէից Համար սրտի թլփատու-
թիւն է։ Ենուանակոչութիւնը ևս կը
տօնեմք, որով կը սովորեմք թէ Եղամայ
և Խւայի գործած անհնազանդութեան
պատճառաւ ինչքան մեղաց և անաս-
նական կրից գերի եղած էր մարդկան
ազգը և ինչ կերպով մեծ կարօտով կըս-
պասէր փրկուելու այն գերութենէն, և
ահա Փրկիչ անունը որ կը լսեմք ու-
րախութեան տօն կը կատարեմք և
խստաբրտութենէ դադարած Քրիստո-
սի հեզութեան և խոնարհութեան ան-
մեղ ճանապարհին կը սիրահարուիմք։

ՏԵՍ.ՈՒՆ ԸՆԴ Ա.ՌԱ.Զ.

Քրիստոս Տէրն մեր ծնած օրէն
քառասուն օր ետքը Երուսաղեմի տա-
ճարը տարուեցաւ Վստուծոյ ընծայելու
համար, որպէս զի հին օրէնքը կատա-
րած լինի։ Տաճարին մէջ Սիմէռն ծե-
րունին կար, որ ի Հոգւոյն Արբոյ հրա-
ման ունէր մահ չտեսնել մինչև որ Օծ-
եալ փրկիչն տեսնէ։ Եյս ծերունին գիր-
կն առաւ զՔրիստոս և պատմեց նորա
մեծ փառքը և մօրը քաշելիք ծանր վիշ-
տերը։ Եյս տօնը մեր Եկեղեցին կը
կատարէ անշարժ փետրուարի 14-ին,
Քրիստոսի քառասունօրեայ տաճար
տարուելը և Վստուծոյ ընծայուելը մեր
միտքը կձգէ թէ մեզմէ ամէն մէկը
տարուած է Եկեղեցի և քահանայի ձեռ-
քով ընծայուած է Վստուծոյ, իբրև
ուխտաւոր նորա պաշտելու և ծառայ-
ելու, ինչպէս որ Սիմէռն Օւերունին
հոգւով զնաց տաճար և արժանի եղաւ

Քրիստոսի տեսութեանը, այսպէս ալ
մենք պարտաւոր եմք տաճարը լինելու
ոչ միայն մարմնով, այլ և հոգւով և նոյն
հոգւով սրբուիլ Աստուծոյ տաճար դառ-
նալ, որ արժանի լինիմք Աստուծոյ մեր
մէջ բնակելուն:

ԾԱՂԿԱԶԱՐԴ.

Յիսուս չարչարուելէն առաջ էշի
վրայ նստած մեծ հանդիսով Երուսա-
ղէմ գնաց: Հրեայք և քաղաքի բոլոր
ժողովուրդը խառն պազմութեամք ե-
լան Յիսուսի առաջ և թագաւորա-
վայել պատուով ընդունեցին զինքը, ժո-
ղովրդեան մէջէն շատերը գետնի վրայ
կտարածէին իւրեանց հագուստները և
ձեռքերը արմաւինի ճիւղեր բռնած
„Ովսաննա ի բարձունս, Ովսաննա Որդի
Դաւթի, Օրհնեալ որ գաս յանուն
Տեառն“ կը կանչէին ինչպէս մարգարէին
բերանով ևս գուշակուած էր: Եյս հան-
դիսով Յիսուս ժողովրդաց և աշակեր-
տաց հետ ուղղակի մտաւ տաճարը և

բոլոր Երուսաղէմը իւր փառքով լեցուց:
Եյս տօնը շարժական է և միշտ Օատկի
կիւրակէէն մի շաբաթ առաջ կը կա-
տարուի:

Քրիստոսի հանդիսաւոր կերպով Ե-
րուսաղէմ մտնելը նախրնթաց հանգա-
մանըն կամ տնօրէնութիւնն էր նորա
կամաւոր չարչարանացը և խաչելու-
թեանը, որոյ համար երկնքէն իջաւ և
գիտէր միանգամայն որ այն փառաց հե-
տևանքն պիտի լինէր իւր կրելիք սոսկա-
լի չարչարանքը, յորմէ չհրաժարեցաւ:

Ուստի այս տօնը մեզի կը սովորե-
ցնէ որ մեք քրիստոնեայքս Քրիստոսի
Ճանապարհովն ևս առաջ պիտի գնամք
թէև այն ճանապարհն ծաղեկներով և
փուշերով ծածկած լինի, միայնթէ չը-
խաբուիմք պիտի աշխարհիս սնուտի գո-
վիստներէն և փառքերէն աներկիւղ պի-
տի կենամք մարմին սպանողներուն դէմ:
որ ուրիշ աւելի անելու բան մի չու-
նին որ անեն (Պուկ. Ժբ. 4) այլ մեր
հոգին և մարմինը դժոխքի գեհենը

ձգողէն պիտի վախենամք, վասն զի
այս օր ՚Յրիսոսի Նրեայք „Ովսաննա“
կանչելով ընդունեցին և հինգ օրէն
ետքը ՚ի խաչ հան զդա“ կանչեցին
Պիղատոսին առջելը և սակաւ ինչ յե-
տոյ „Զիք մեր թագաւոր բացի կայսերէ“:

ՅիշԱՏԱԿ ԸՆԹՐԵՍՑ կասուի այն տնօր,
զոր Յւագ հինգշարթի օրը կը յիշա-
տակէ մեր եկեղեցին: Եյս յիշատակը
կը յիշեցնէ մեզ Յիշուսի Օատիկը, զոր
կերաւ վերջին անգամ իւր աշակեր-
տացը հետ ըստ հին օրինաց զարդար-
եալ վերնատան մէջ, ուր սեղանին վրայ
հացը առաւ, օրհնեց, կտրեց աշակերտ-
ներուն տուաւ ասաց. „Եյս է մար-
մին իմ որ վասն ձեր և բազ-
մաց բաշխի“, և նոյնպէս բաժակը ա-
ռաւ օրհնեց, խմեց տուաւ աշակերտ-
ներուն որ խմեն, ու ասաց „Եյս է ա-
րիւն իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր և
բազմաց հեղանի, զայս արարէք առ
իմոյ յիշատակի“: Ըստ որում Ոինայի
օրէնքներն ընդունած ժամանակ Մով-

սէս առաջին ողջակիզի արիւնը ցա-
նեց ժողովրդին վերայ ասելով: „Եհա
արիւն է ուխտին զոր ուխտեաց Տէր
ընդ ձեզ վասն ամենայն բանիցս այ-
սոցիկ“: (Ելք. իդ. 8) որով ուխտեցին
և Խորայէլի որդիքն թէ որ չկարողա-
նան պահել Յստուծոյ ուխտի օրէնքն
պարտական են արեան, և ըստ որում
չկարողացաւ Խորայէլ Ճշութեամբ կա-
տարել ուխտին օրէնքն, հետնաբար պար-
տական մնաց Յստուծոյ ուխտին իւր
արիւնը զոհելու, որպէս զի Յստուծ
շնորհէ նորա յանցանքը և սրբէ:

Յիշուս մարդացեալն Յստուծ
յանձն առաւ իւր արիւնը թափել
մարդկային յանցանաց այս խոստացեալ
փրկանաց իգին իւր արիւնը որ բոլորո-
վին անպարտ էր և անարատ իբրև
Որդի Վարդոյ, ըստ անարատութեան
Օատկական գառին, զոր սահմանել էր
Յստուծ հին ուխտի օրէնքումն ամ ըստ
ամէ բաւութեան ի փրկանա: Յիշուսի այս
փրկագործութեան յիշատակն է ընթըր-

եաց տօնը, որուն կցորդէ նաև Ոտնաշլուայի խոնարհութեան արարքը և օրինակն ու միմեանց խոնարհելու բարձրագոյն պատուիրանը, այս խոնարհութիւնը չնդունող աշակերտները Քրիստոսի փրկագործութեան հաղորդ չեն ամեննեին ըստ հաստատուն վճռոյ վարդապետութեան Սուրբ Կւետարանին.

ԱՌԻՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ.

Հաբաթ երեկոյ հասաւ, սկսաւ երկրորդ օրուան սկիզբը որ է միաշաբաթին: Եստուծոյ հրեշտակը եղաւ Յիսուսի գերեզմանին մօտ ու գերեզմանին վրայի մեծ քարը մէկդի գոլորեց ինքն ալ վրան նստաւ: Գերեզմանին պահապան զինւորները կեսամեռ գետին զլորեցան: Եյս միջոցին բարեպաշտ կանայք առաւօտեան կանուխ հետերնին անուշ խղով լցած ամաններ առած կերթային գերեզման Յիսուսի մարմինը անուշ խղով և խնկով օծելու. երբոր տեսան գերեզմանին վրայի քարին մէկ-

տի գլորուածը զարմացան մէջը ծռեցան նայեցան, բայց չը գտան Յիսուսի մարմինը, միայն տեսան հրեշտակ մի գերեզմանին աջ կողմը նստած: Կանայք չնանցցան հրեշտակին ահով. զողով իրարու երես կնայէին և հրեշտակը ասաց յինկարեր կանանց գետեմ խաչեալ Յիսուսին կինտուէք, նա այս տեղ չէ, նա յարութիւն առաւ, ինչպէս ինքը գուշակած էր, ուրեմն շուտով գնացէք աւետիս տալու նորա աշակերտներուն որ Քրիստոս յարութիւն առել է“, նոքա ալ խկոյն գնացին աշակերտաց մօտ, ճանապարհին հանդարտեցան, վասն զի յիշեցին Յիսուսի խօսքերը, նոցա վախը այնուհետեւ ուրախութեան դարձաւ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ.

Քրիստոս Տէրն մեր յարութեան քառասներորդ օրն մարդկային մարմովն երկինք բարձրացաւ և Հօր Եստուծոյ աջ կողմը նստաւ իւր Եստուա-

ծային փառքով նախապէս իւր աշակերտները տարաւ հետը Զիթենեաց լեռը, տուաւ նոցա իւր պատուէրները, օրհնեց նոցա և լուսաւոր ամպերուն մէջէն վերացաւ երկինք:

Վրիստոսի Համբարձմանէն կը սովորեմք թէ մեր նախածնողքը Ըստուծոյ պատուէրը չպահելով հոգւով և մարմնով ապականեցան և զբկուցան Ըստուծոյ տեսութենէն: Վրիստոս Սուրբ Կոյս Մարիամէն մարմին առնելով եկաւ աշխարհ և իւր տնօրէնութեան գաղտնի խորհուրդները կատարելով մեր հոգին և մարմինը սրբեց սկզբնական մեղքէն պատճառած ապականութենէն և նոյն մարդկային մարմնովն Ըստուծոյ աջ կողմը նստելով արժանացուց և զմարդն Ըստուծոյ տեսութեան: Եւ որովհետեւ խոստացաւ նոյն օրը թէ ինքը մեզ հետ է մինչեւ ի կատարած աշխարհիս, յուսացոյց և զմեզ տանելու առ Ըստուած:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ.

Հոգւոյն Արբոյ գալստեան տօնն է առաքելոց վերայ հրեղէն լեզուներուն նմանութեամբ իջնելն: Վրիստոսի աշակերտները և հաւատացեալք 120 հոգւոյ չափ արք և կանայք հաւաքուած Երուսաղեմի վերնատան մէջ ազօթ կանէին սպասելով Վրիստոսի խոստման կատարուելուն, և ահա յսնկարծ քամիի նման ձայն մը լսուեցաւ և երկնքէն հրեղէն լեզուներ եկան իջան առաքելոց վրայ, որոնք Ս. հոգւով լեցուած սկսան զանազան լեզուներ խօսել, զորս մինչև այն ժամանակ չէին գիտեր: Եյս տօնը կը կատարուի Համբարձմանէն տասն օր յետոյ Օատկէն սկսած յիսներորդ օրը, յորմէ առնելով Պենտէկոստէ կը կոչուի:

Ըստուած իւր Սուրբ Հոգին փշելով առաջին մարդոյն վերայ տուաւ նորա կենդանի հոգի, բայց նախահայրն

մեր Աղամը պատուիրազանցութեամբ
իւր հոգւոյ լոյսը մթնեցուց, ուստի
Հոգւոյն սրբոյ գալստեամբը նորէն կը
տրուի նոյն առաջին շնորհքը: Եռաք-
եալք վերնատան մէջ Հոգւոյն Սրբոյ
շնորհքովը լցուած ստացան նոր լեզու,
իմաստութիւն, զօրութիւն, քաջալերու-
թիւն աներկիւղ քարոզելու և տարա-
ծելու Քրիստոսի Սուրբ Եւետարանը
բոլոր աշխարհիս երեսը և ամենայն
քրիստոնեայք մլրտուելով աներեւութա-
պէս կտանան Հոգւոյն Սրբոյ շնորհքը
և Դրօշմամբ կրնդունին հոգւոյ զօրու-
թիւն և կարողութիւն, որով կառաջ-
նորդուին դէպի արդարութեան ձանա-
պարհը: Եյս տօնին յիշատակաւը կը
յիշեմք Քրիստոսի Յիսուսի այն խօս-
տումն, որ ընթրեաց երեկոյին խօս-
տացաւ թէ ես երբ առ Հայր երթամ,
կաղաչեմ զՀայր որ միսիթարիչ խրկէ
ձեզ զՀոգին Ճշմարտութեան, նոյնպէս
կը յիշեմք և այն պատուէրը, զոր պա-
տուիրեց աշակերտներուն Համբարձման

օրը, թէ զնացէք այսուհետեւ աշակեր-
տեցէք զամենայն հեթանոս և մլրտե-
ցէք զնոսա յանուն Հօր և Որդոյ և
Հոգւոյն Սրբոյ, այս յիշատակաւ կը յի-
շեմք սոյն օրը ամենասուրբ Երրորդու-
թեան և միաստուածութեան երեքանձ-
նեայ միութիւնն, վասն որոյ և ոմանք
քրիստոնեայ ազգեր կանուանեն նաև
այս տօնը. տօն ամենասուրբ Երրորդու-
թեան: Հայաստանեայց եկեղեցին Հոգ-
ւոյն Սրբոյ գալստեան տօնը կը յիշատա-
կէ ամբողջ եօթ օր խորհրդաւոր երգե-
րով և ընթերցուածներով:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.

Քրիստոս Տէրն մեր իւր աշակերտ-
ներէն երեքն առած բարձրացաւ թա-
քօր լերան գլուխն և աղօթքի կեցած
ժամանակ յանկարծ նորա երեսը արե-
գակի նման լուսաւորուեցաւ, վրայի
հանդերձը ձիւնի նման սպիտակ եղաւ,
երեւեցան նորա Մովսէս և Եղիա, որը
կը խօսէին հետը նորա չարչարանաց

վերայ, որ պիտի կատարուէին Երուսաղեմի մէջ, յետոյ լուսաւոր ամպ մի նոցա վրայ հովանի եղաւ և լսուեցաւ Հօր Ծատուծոյ ձայնը „Դա է Որդի իմ սիրելի, Դմա լուարուք“: Այս խորհուրդը ցոյց տուաւ Յիսուս իւր երեք աշակերտներուն, որոց համար վճռել էր թէ պիտի չմեռանիմ մինչև որ տեսնեն թէ՛ Ծատուծոյ թագաւորութիւնն եկել է զօրութեամբ, և այն երեք աշակերտները տեսան, թէ՛ Ծատուծոյ թագաւորութիւնը և նորա թագաւորին տեսիլը ինչպէս է, և թէ՛ լրսեցին Հօր Ծատուծոյ պատուէրը որ կասէր „Դմա լուարուք“: Ըստ որում Յիսուս աշակերտներուն պատուիրեց որ այս խորհուրդը ոչ ոքի չպատմեն մինչև որ Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ. ուստի առաքեալք սահմանեցին տօնել Հոգեգալուստէն ետքը:



Պ.

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆԵՐԻ

Սուրբ Ծատուածածնայ յղութեան յիշատակը տօնելով, Քրիստոսի մարդեղութեան առաջին տնօրէնութիւնը կը յիշեմք, յորում հրեշտակն Ծատուծոյ յայտնեց Սուրբ Ծատուածածնի ծնողաց, թէ ահա կըյզանայ ամուլն Ծննա և կը ծնանի այն անարատ Առյու, յորմէ Քրիստոս Փրկիչ պիտի մարմնանայ:

Սուրբ Ծատուածածնայ ծնունդն կը տօնեմք, որ առաջին յայտնութեան կատարումն է, և այս աւուր յիշատակը կընորոգէ՛ մեր հաւատը և կը հաստատէ Ծատուծոյ անսուտ խոստման ձշմարտապէս կատարելու հաստատուն յուսոյն մէջ: Այս տօները անշարժ են և կտօնէ Հայաստանեայց Եկեղեցին Յղութիւնը

Դեկտեմբերի 9-ին, իսկ ծնունդն Աեպտեմբերի 8-ին: Եյս տօնէն կը սովորեմք այն որ Աստուած իւր նախասահմանութեան մէջ ունի աշխարհիս բարերար մարդկանց ծնուելը ժամանակին, առաքինի և բարեպաշտ ամուսիներ առանց ժառանգի չեն մնար, որոց օրինակները կը տեսնիմք Առւրբ Գրոց մէջ: Եյս տօնը կը սովորեցնէ բարեպաշտ ծնողաց որդւոցը որ իւրեանց իմաստուն և արաքինի վարքովն ուրախութիւն լինին իւրեանց ծնողացը և ճշմարիտ Աստուածապաշտութեամք ծառայեն յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց, վասն զի Առւրբ Կոյս Մարիամի ծնունդը այդ ուրախութիւնը բոլոր աշխարհիս աւետեց:

Գալիլիայի Կապարէթ քաղաքին մէջ կը բնակէին Յովակէմ և Ենա Առւրբ Կուտի բարեպաշտ ծնողքը: Առքա խոստացան Աստուծոյ նուիրել իւրեանց զաւակը, Աստուած լսեց նոցա ազօթքը, ուստի նուիրեցին զինքը Աս-

տուծոյ տաճարին սպասաւորութեան: Աստուած այնպէս տնօրինեց որ մնայ տաճարին մէջ և միշտ տիրոջ խօսքը լսէ, մանկութեան հասակումը իւր մտքի և սրտի մէջ ընդունեց բարի մտածմունքներ, սուրբ զգացմունքներ և բաղձանքներ, ուր և իւր բոլոր կեանքը միշտ ազօթքով և ուխտի կտակարանաց ընթերցուածներով կանցնէր: Եյս տօնը անշարժ է և կը կատարուի Կոյեմբերի 21-ին:

Եյս տօնը քրիստոնէից կը սովորեցունէ նուիրել իւրեանց բոլոր կեանքը Աստուծոյ մինչև գերեզման մտնելնին: Իսկ ծնողաց բարի օրինակ կուտայ կրթել և դաստիրակել իւրեանց որդիքը դեռ մանկութեան հասակնէն հաւատոյ և բարեպաշտութեան մէջ, այս տօնէն կանայք և աղջկունք պիտի սովորին կրթել իւրեանց անձը Առւրբ Կուտին նմանցնելու, ինչպէս Առւրբ Կոյս Մարիամ երեք տարեկան հասակնէն Աստուծոյ տաճարին հովանաւորութեան տակ

կը դաստիրակուէր և իւր ժամանակը
որոշած էր Եստուծոյ օրէնքը սովորելու,
աղօթելու և բարի գործերով զբաղուե-
լու. այսպէս այ կանայք և աղջկունք
տղայութեան ժամանակէն պիտի կըր-
թուին բարեպաշտական հոգւով Ես-
տուծոյ օրէնքներու ուսումնիս ու տըն-
տեսական օգտակար աշխատանքով:

Սուրբ Համբարձմանէն ետքը Ես-
տուածամայր գեռ բաւական տարի աշ-
խարհիս վերայ ապրեցաւ. վախճանին
մօտ Հոգւոյն Արքոյ ազդմամբը առաք-
եալներն աշխարհիս բոլոր կողմերէն
եկան Երուսաղէմ ժողովեցան: Եստուա-
ծամայր նոցա ամենուն օրհնեց և իւր
հրաշալի պատկերը տուաւ նոցա ի յի-
շատակ: Քրիստոս Տէրն մեր ևս եկաւ,
որին և աւանդեց Ս. Կոյսն Մարիամ
իւր հոգին:

Յիսուսի Քրիստոսի այս գալուստնէ
որ կասուի ԳԱԼՈՒՍ Ի ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ
ԱՍՏՈՒԱՆԱԾՆԱՅ: Եռաքեալք և ամեն այն
հաւատացեալք Երուսաղէմի ԳԵՂՄԵՆ-

մանի պարտեզին մէջ թաղեցին Սուրբ
Կուսին մարմինը:

Եռաքեալներէն մին Բարդուղիմէոս
առաքեալ Երուսաղէմ հասաւ Սուրբ
Կուսի թաղման երկրորդ օրը և ցան-
կացաւ տեսնել գոնէ մարմինը, թաղ-
ման երրորդ օրն՝ որ ըստ սովորութեան
հրէից մեռեներու գերեզմանը խունկ
ու իւղ կը տանէին, գնացին բոլոր ա-
ռաքեալներն որ բանան գերեզմանը,
գնացին և գտան որ Յիսուս Քրիստոս
Որդին (Եստուծոյ) և Միածին փոխել
է զՍուրբ Կոյսն և չգտան ինչպէս կը
պատմէ Դիոնէսէոս Երիսպագացին: Եյս
տօնը շարժական է. մեր եկեղեցին կը-
տօնէ (Օգոստոս ամսուան 15-ին մեր-
ձակայ կիւրակէ օրումն:

Դ.

ԽԱԶ ՎԵՐԱՅԻ, ԽԱԶ ԳԻՒՏԻ,

ՎԱՐԱԳԱՅ ԽԱԶԻ ՏՈՆԵՐ.

Հին ժամանակները Հռովմայեցւոց
մէջ խաչը սոսկալի պատիժներէն մէկն
կը համարուէր, որոյ կ' դատապարտուէ-
ին մեծամեծ յանցաւորները, այսպէս ալ
հրեայք զՎրիստոս անարգական մա-
հով պատժելու համար դատապարտե-
ցին խաչելու, ըստ որում Վրիստոս Տէրն
մեր մատուցաւ անարատ պատարագ
Հօր Ըստուծոյ ի քաւովթին մեղաց
մարդկան, խաչին վերայ թափեցաւ նո-
րա փրկարար արիւնը իբրև նոր ուխտ
փոխանակ հին ուխտին արեան, խաչիւ
յաղթեց Վրիստոս Տէրն մեր աշխար-
հիս իշխանութեանը, խաչիւ զօրացան
բոլոր հաւատացեալները ու յաղթեցին

դիցամոլար ԱՆԱԹԲՈՐՈՅ կռապաշտ ժողովրդեան իշխանութեան. Քրիստոս խաչիւ յաղթեց աշխարհիս հպարտութեանը, ոտութեանը և մահու իշխանութեան, խաչին զօրութեամբը հաւատացեաները գործեցին մեծամեծ հրաշքներ, որով խաչը դարձաւ հաւատացելոց փրկութեան սուրբ նշան: Հայոց եկեղեցին ընդունած է Սուրբ խաչ տօնը կատարել մեծ հանդիսով քրիստոնեութեան երրորդ դարում:

Քրիստոսի Տեառն մերոյ Համբարձմանէն ետքն Հրեից քահանայապետներն, ինչպէս որ աշխատեցան կամ խորհեցան արգելուլ առաքելոց քարոզութեան ուսումն, այսպէս ալ կամեցան կորսնցնել սուրբ խաչը որ մեծամեծ ոքանչելիքներ կանէր ուխտաւոր հիւանդներուն վերայ, այս մտադրութեամբ ձգել տուին Սուրբ խաչը մի այրի մէջ և քաղաքի աղբիւմն այն տեղ լեցուցին: Հրեից հալածանքն Երուսաղէմէն դադրելէն ետքն էր, որ հաւա-

տացեալներն հանեցին այն խաչն աղբիւսաց տակէն որ անուշահոտ բուրմամբ յայտնուցաւ: Կախնեաց ճառերէն հաւատարիմ օրինակներումն կերեի, թէ խաչի գիւտը եղած է Աղողիոս Կայսեր օրովն թագուհւոյ կամ դշխուհւոյ փափազմամբ: Այս դշխոյն է Եբգար թագաւորին կինն Հեղինէ որ այն ժամանակ յԵրուսաղէմ էր, զոր կը յիշէ և Յովսեպոս պատմիչը: Ախալ և աղաւաղուած են այն ճառերը, որոց մին խաչի գիւտը կընծայէ Աղողիոս Կայսեր կնոջ Պատրոնիկէ թագուհւոյն որ քրիստոնեայ չէր և յԵրուսաղէմ գնացած չէ և միւսն կընծայէ Կոստանդիանոսի մօր Հեղինէին, յորմէ շատ առաջ է խաչի գիւտը, որոյ մի մասն կար Հռիփսիմեանց կուսանաց մօտ զոր կըպաշտէին:

Կառանութեան: Ոմանք մեր գիտնական եկեղեցականներէն կենթաղբեն որ այն Քրիստոսի խաչին գտնողն ոչ թէ Հեղինէ թագուհին էր Կոստանդիանոսի մայրը, այլ մեր Եբգար թագաւորին

կինն էր չեղինէ որ այն միջոցներուն
Երուսաղէմ գնացած էր, երբ քրիստո-
նէութիւնը չայաստանի մէջ հալա-
ծուեցաւ Ենանէի և Ամնատրուկի ձեռ-
քերովը և այս կարծիքը աւելի հա-
ւանական է:

Կոստանդիանոս Կայսեր որդին Կոս-
տանդոս Կայսեր ժամանակ Հրեայք և
Երիսսականք կընախատէին և կը ծաղ-
րէին քրիստոնէից այն պաշտօնը որով
Սուրբ Խաչի նշանը կը մեծարէին ամեն
կողմ: Նոյն օրերն Երուսաղէմումն ե-
րեցաւ մի լուսաւոր Խաչ Երկունքումն
Զիթենեաց լերան գլխին մինչև Երու-
սաղէմի Յարութեան տաճարին վերայ
Երկնցած: Այս Երեւութին վրայ Խաչի
պաշտօնը նախատողները լուեցին, և
քրիստոնէից Եկեղեցին յատուկ տօն նր-
շանակեց Սուրբ Խաչի Երևման, զոր կը
կատարէ մեր Եկեղեցին Զատկի հինգ-
Երորդ կիւրակէում:

Խաչի վերուցումն այլ և այլ կեր-
պով նկարագրող ձառեր կան, որոնք

առհասարակ Եօթներորդ դարու գրուած
են: Փրկչական 630-ին երբ Պարսկաս-
տանի գերութենէն դարձուցին Սուրբ
Խաչը, այն օրը սահմանեցին Խաչ վե-
րոցի տօնը, զոր կը տօնէ մեր Եկեղեցին
Սեպտեմբերի 14-ին մերձակայ կիւրա-
կէումն:

Երբոր Սուրբ Հռիփսիմեանք Հայ-
աստան Եկան, Տրտատ թագաւորին
ձեռքէն փախչելով գնացին Բնակեցան
Վարագայ լերան վերայ. Սուրբն Հռիփ-
սիմէ կենաց փայտի մի մասը Վղողի-
սո Կայսեր թագուհիէն առնելով փո-
րեց լեռը և այն տեղ պահէց, որն որ
653-ին թ. Քրիստոսի յայտնուեցաւ:
Թագիկ Ճգնաւորը աւանդութեամբ գի-
տէր սուրբ նշանի պահուած լինելը լե-
րան վերայ և Երբ Յովէլ աշակերտի-
չետ ազօթք կանէր Կատուծոյ, որ յայտ-
նէ սուրբ նշանի տեղը, այդ միջոցին
յանկարծ ձայն մը լսեցին և պայծառ
լոյս մի տեսան Վարագայ լերան վերայ
և 12-կու լուսեղին սիւներ 12-կու օր

մնացին, այնպէս որ հեռաւոր տեղերու մարդիկներն ալ տեսան և շատ մը ե-կեղեցականներ և աշխարհականներ ե-կան տեսնելու այդ լուսեղէն սիւները։ Եյն 12-կու սիւներուն տեղը շինեցին 12-կու եկեղեցի, իսկ այն եկեղեցին, որոյ սեղանին վրայ կանգնեցաւ սուրբ նշանը պատռեցին և Ներսէս Շնորհա-լի Կաթուղիկոսը Հոկտեմբեր ամսոյն մէջ տօն սահմանեց, զորն մեր եկեղե-ցին մինչև ցայսօր հանդիսաւոր կեր-պով կը կատարէ։

Քրիստոսի 351 թ. Անյիսի 7-ին Սուրբ Խիւրդի Երուսաղէմի եպիսկոպո-սին ժամանակ օդոյն մէջ երևեցաւ լու-սեղէն իւաչ, որոյ լոյսը Գողգոթայ լեռ-նէն մինչև Զիթենաց լեռը տարածուե-ցաւ և այդպէս բաւական ժամանակ մնաց, բոլոր բազմութիւնը քրիստոն-էայք, հեթանոսք և հրեայք տեսան այս լոյսը, հարիւր հազար հոգի ալ այդ պատճառաւ հաւատացին Քրիստոսի և Ալբանաց եկեղեցին ալ կը տօնէ։

սքանչելեաց վրայ թուղթ մը գրեց Կոս-տանդ Արիստեան Կայսեր։

Յայսմաւորէն կը տեսնուի որ Յու-լիսի 2-ին երկու իշխաններ Երուսաղէմ ուխտի գնալով Ճանապարհին հրեայ կնոջ մօտ շատ մի ցաւագարներ, այս անցքէն հետաքրքրուած կը մտնեն կնոջ տունը և կրտեսնեն տուփ մի և այն կնոջմէն կիմանան որ այդ Աստուա-ծածնայ Գևադիրն է։ Իշխանները կը-գնան Երուսաղէմ այն տուփի նման ուրիշ մը շինել կուտան և դարձած ժամանակին նորէն կը մտնեն այն կնոջ տունը և իսկական տուփը առնելով անոր տեղը իրենց շինել տուսածը կը-դընեն և այն կը տանեն Կոստանդնու-պօլիս և կը պատմեն իրենց տեսածը Սրբազն Պատրիարքին, նա ալ հանդի-սով կը գնէ եկեղեցւոյ մէջ և Յուլիսի 2-ին ալ տօն կընշանակէ, զորն Յու-նաց եկեղեցին ալ կը տօնէ։

Յայսմաւորը մեզ այսչափ կը պատ-մէ, որ ամեօհնեալ Սուրբ Աստուածած-

նայ գօտին գտան Երոսաղէմի մէջ
և տարին Առատանդնուպօլիս, բոլոր քա-
ղաքի ժողովուրդը դիմաւորեցին, երբ
իմացան այն գիւտին լուրը և մեծ
պատուով դրին զայն Եկեղեցւոյ մէջ,
նորա անունով ալ Եկեղեցի շինեցին և
նշանակեցին Օգոստոսի ՅԱ-ին տօն
կատարել:



Հայ զգանաք ոյ Անցան վնասելոց
մաս ազատ ոք սահմա անցան
մաս ե.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՕՆԵՐ

Սուրբ Եկեղեցու փառաւոր հանդէս-
ներն, որոնք կը կատարուին այն որ-
բոց յիշատակին համար, որոնց անուամբ
շինուած են Եկեղեցիներն, այն օրերումն
տեղական և մերձակայ տեղերու ժո-
ղովուրդները խուռն բազմութեամբ ուխ-
տի կուգան այն Եկեղեցին որ սուրբի
անուամբ որ շինուած է, առաջի Երե-
կոյեան է ԵԿԵՑԻ կլինի Երեկոյեան Ժա-
մերգութենէն Ետքը զանգակահարու-
թեամբ միւս առաւօտ հանդիսաւոր պա-
տարագ կը մատուցանի, սուրբ մատու-
քով խաչալուայի կանոնը կը կատարուի,
ոչխարներ կմորթուին մատաղ կպատ-
րաստուի աղքատաց և ուխտաւոր ժո-
ղովրդոց կը բաժանուի, այն օրը բա-
րեպաշտ քրիստոնեան իւր օրը հոգեոր
ուրախութեամբ անցնելով հոգւով կը
միմիթարուի և կը սովորի Եկեղեցին

սրբութեամբ անցնել իւր կեանքը աշ-
խարհիս վերայ, որպէս զի նորա բարի
յիշատակը անմոռաց մնաց իւր սրտի
մէջ նորա մահէն ետքը, և սրբոց բա-
րի գործերուն հետևելով ինքն ալ աշ-
խատի Աստուծոյ հոծայանալ և նո-
ցա հետ ժառանգել երկնից արքայու-
թիւնը:*)

Սուրբ Գրիգոր լուսաւորիչ երբոր
վերջացուց Եջմիածնի շինութիւնը, օրհ-
նեց զայն և այն տեղ սկսաւ Աստուա-
ծապաշտութիւնը: Իսկ կաթուղիկէ կը
կոչուի անոր համար որ ընդհանուր ա-
մենայն Հայոց Ազգի Ուայր եկեղեցին է
և հարազատ անփոփոխ Աթոռ Ազգիս
Հայրապետաց, որոյ Աթոռակալն միայն
կը համարուի զիսաւոր և օրինաւոր յա-
ջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լու-
սաւորչին:

*) ԿՕՄՆԵԲԱ-ՌԵ-Ա. երես 157. § 73. Աստուածպաշ-
տութեան Հայաստանիայց եկեղեցւոյ աշխատութեամբ
Ատեփ. աւագ քահանայ Մանղինեանց տող. Վաղարշա-
պատ հրամանաւ Տ. Տ. Գէորգայ Գ. Վեհափառ. և Սրբագ-
նագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց,

Զ.

ՍՐԲՈՅ ՏՕՆԵՐ.

Հոկիփոխմէ կոյար հաստատ մնալով
քրիստոնէական հաւատոյ մէջ չը խար-
ուեցաւ ամենենին Գիոկիտիանոս կայ-
սեր և մեր Տրդատ թագաւորի հրա-
պուրանքներէն, անարգեց բոլորովին
Հայաստանի թագուհի լինելը, վասն զի
արդէն Քրիստոսի հարսն եղած էր,
դիմացաւ թագաւորին տուած անտա-
նելի չարչարանացը Աստուածային նա-
խախինամութեամբը, նոյնպէս և Սուրբն
Գրայեանէ ալ յանձն չառաւ համոզել
Հոկիփոխմէին լինել Հայոց աշխարհին
թագուհի, այլ մինչև մահը իւր ուխտին
վրայ հաստատ մնաց և Քրիստոսի հարս-
նութիւնը վեր համարեց աշխարհիս
ամենայն վայելքներէն, անցաւոր պա-
տիւներէ և փառքերէ: Սոցա նման այս-

պէս ամենայն բարեպաշտ և առաքինազարդ վարուք ոնեալ և դաստիարակեալ օրիորդներ և կանայք սուրբ կուսանաց նման ժուժկալութիւն կըրնան ունենալ, եթէ վառուած լինեն քրիստոնէական հաւատոյ սիրովն և յուսովն, ուստի և անմահացնել խրեանց կեանքը այլոց բարի օրինակ հանգիստնալով:

Սուրբ Լուսաւորիչ, Տրդատ թագաւոր և բոլոր Հայոց ազգի հաւանութեամբը գնաց Վիստրեայ Եպիսկոպոս ձեռնադրուելու, որով Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետական Վթուը Երկրորդ անգամ նորոգեց առաջին Լուսաւորիչ Ծաղկոս և Բարդուղիմէոս առաքեալներէն ետքը: Երբ Լուսաւորիչ իւր աթուը վերադարձաւ Սուրբ Եջմիածին հետը բերաւ Յովհաննու Կարապետի և Վթանագինէ Եպիսկոպոսի մատոնքը, առաջնոյն վերայ Տարօնի (Ուշի) մէջ Երածանի գետոյն մօտ Երկու տեղ Եկեղեցի շինեց: Ասով մեզ

սովորեցուց Սուրբ Լուսաւորիչ որ սրբոց մասոնքը պէտքէ յարգել և բարեխոս բռնել նոցա Ծատուծոյ առջելը և մինչև ցայժմ մեր Եկեղեցին անխափան կը շարունակէ սրբոց մատոնքներու յարգութիւնը:

Եւծն Ներսէս Հայրապետն իբրև արժանաւոր ժառանգ և յաջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, Հայոց ժափառական կրօնաւորները ժողովեց Հայաստան. Եկեղեցական խանգարեալ կարգերը և կանոնները ուղղեց, շինեց հիւանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ, հաստատեց վանքեր, մատուռներ և որ ամենէն զլիաւորն է բացեց ուսումնարաններ, յետոյ 12-կու Եպիսկոպոսներէ բաղկացեալ կաթուղիկոսի Խորհրդականներ կարգեց. Աս առաջինը եղաւ որ ստացաւ ՊԱՏՐԻՈՐ տիտղոսը և կարգադրուեցաւ որ այնուհետև Հայոց Կաթուղիկոսները ձեռնադրութեան համար չգնան Կեսարեա, այլ օծուին և

ձեռնադրութին Սուրբ Եջմիածնայ մէջ իւր եպիսկոպոսներէն։ Այս կարգը անկէ ի վեր մինչև ցայժմ անխափան կը պահուի ազգիս մէջ։

Որովհետեւ Հայոց Ըզդի ամեն հոգեւորականներն պարտաւոր են Ա. Պրիգոր Լուսաւորչի, Մեծն Կերսեաի նման անքուն հսկողութեամբ հսկե Ծատուծոյ ժողովուրդը բարեկարգելու և արթուն մտօք խնամարկելու Հայոց եկեղեցին, վանքերը և եկեղեցականութիւնը հրոկայաքայլ յառաջ տանելու, մանաւանդայսպիսի խառն Ժամանակներու մէջ, նմանապէս պարտաւոր են հոգալ ազգի աղքատները, որբերը, տնանկները և գլխաւորապէս լինել անշահասէր և բարի օրինակ իւրեանց հաւատացեալ բանաւոր հօտին Քրիստոսի։

Մեր եկեղեցին Թաղէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօները կը կատարէ երկուոր միասին տարին մի անգամ։ Երբ Հայոց Ծբգար թագաւորը սաստիկ հիւանդանալով յոյսը կտրեց

իւր Ժամանակի հմուտ բժիշկներուն տալու օգնութիւններէն իւր Երուսաղէմ ուղարկած Հռովմայեցւոց կողմանէ նշանակուած Մառինոս հազարապետին դեսպաններէն լսելով Քրիստոսի արած հրաշագործութիւնը՝ սրտին մէջ հաւատոյ ծշմարիտ լոյսը ծագեցաւ, իսկոյն մարդիկ ուղարկեց, Վնանէ սուրհանդակին հետն ալ գիր մը Քրիստոսի անուամբ, որով կըհաւատար նորա Ծատուծութեանը և միանգամայն կը խնդրէր որ գայ իւր քաղաքը բնակի։ Քրիստոս տեսնելով Ծբգարու անկեղծ և ծշմարիտ հաւատը խոստացաւ իւր Համբարձմանէն ետքը ուղարկել իւր աշակերտներէն մին. նորա անբուժելի ցաւէն բժշկելու համար, Թաղէոս աւաքեալ եկաւ Ծբգարու մօտ Եղեսիաքաղաք՝ մկրտեց զենքը և բրիստոնէ-ութեան հիմը դրաւ Հայաստանի մէջ. իսկ յետոյ Բարդուղիմէոս առաքելոյն ձեռոք աւելի տարածուեցաւ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ, այդ

պատճառաւ իսկ սոքա կը կոչուին աւ-
ուաջին Լուսաւորիչք Հայաստանի. որով
քրիստոնէայ ազգաց մէջ առաջինը
Հայերը եղան որ ընդունեցին քրիստո-
նէական հաւաք Երգարու ժամանակ
Քրիստոսի 34 թուականին:

Թագէոս առաքելոյն տօնը մեր եկե-
ղեցին կը տօնէ Սուրբ Կոյս Անդուխ-
տի տօնին հետ, որոնք Հայոց Անաւ-
դրուկ թագաւորին հրամանաւը նահաւ-
տակուեցան, երբ Երգարէն ետքը քրիս-
տոնէութիւնը Ենանէի և Անատրուկի
ժամանակները հալածանաց մէջ էր, այս
տօները շարժական են:

Երբոր Հոռվմայեցւոց տէրութիւնը
ընդհանուր քրիստոնէութեան զէմ հա-
լածանք հանած ընաջինջ անելու կաշ-
խատէր, Հայաստանի մէջ ալ Տրդատ
թագաւորը զայրացած քրիստոնէու-
թեան անձման գէմ սաստիկ հրաման
հանեց որ քրիստոնէութիւնը արգելուի.
սակայն այն հալածանքները, տեսակ տե-
սակ տանջանքները, բանտերը և կախա-

զանները չկարողացան արգելք լինել
քրիստոնէութեան կրօնի տարածմանը,
ինչպէս որ Գրիգոր Լուսաւորչի քաջ
խոստովանութեամբը Տրդատ թագա-
ւորի առաջ: Վստուծոյ աներեւոյթ օգ-
նականութեամբը մօտ 15 տարի սու-
կալի չարչարանաց համբերեց և յետոյ
Երտաշատ քաղաքի մօտ գտնուած խոր
վիրապը ձգուելով՝ խոնարհեցոյց այն
գոռող և հպարտ թագաւորին քրիստ-
ոնէութեան լծոյն տակ: Տրդատ գիւա-
հարեցաւ և գազանաբարոյ կեանք սկսաւ
վարել քաղաքէն դուրս անմարդաբնակ
տեղեր: Տրդատի քոյրը Խոսրովիդուխտ
Վստուածային յայտնութեամբ Օտա-
նախարարի ձեռքով կենդանի նահատակ
Գրիգոր կը հանուի վիրապէն և կըսկսի
քարոզութիւն անել: Սուրբն Գրիգորի
աղօթքովը մոլեգնեալ Տրդատ բժշկուե-
ցաւ. Երբոր Ահսարիսայէն վերադարձաւ
Աղօթքապատ իւր տեսլեան համեմատ
ի պատիւ իջման Վիածնի 303 թ. շի-
նեց այն տաճարը որ կըկոչուի Խջմիա-

ծին որն որ գարձաւ ամենայն Հայոց
Հայրապետութեան Մայր Եթու։ Ի
վերջոյ Ս. Գրիգոր, ամեն ինչ կարդի
դնել է յետոյ հեռանալով իւր Հայրա-
պետական Եթուէն, գնաց Մանեայ
այրին մէջ ճգնեցաւ։ Շատ տարինե-
րէ վերջն Գառնի Ճգնաւորը Եստուա-
ծային յայտնութեամբ գտաւ նորա
մարմինը, որոյ նշխարքը իբրև անդին
գանձ և ազգային պարծանք մասնա-
ւորուեցաւ հայ Եկեղեցիներին։ Արբոյն
Գրիգորի երեք տօնելին, որք են ՄՈՒՏՆ
ՎԻՐԱՊՆ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊՆ և ԳԻՒՏ ՊԱՏՈՒԿՈՆ
ՆԵԽՈՐԱՑՆ տարուան մէջ առանձին
առանձին ժամանակ կը կատարուին,
իբրև յատուկ ազգային տօներ մեծ
հանդիսով, որով ժողովրդեան միտքը
կը ձգուին վերոյիշեալ պատմական
անցքերը վերաբերմամբ քրիստոնէու-
թեան աճման և տարածման Հայա-
տանի մէջ։

Գարբիէլ և Միխայէլ հրեշտակա-
պետաց տօնը ստհմանուած է ի պա-

տիւ ամենայն հրեշտակաց և Երկնային
զօրաց, որոնք քրիստոնէից աներեւոյթ
պաշտպաններն և պահապաններն են,
անոր համար ալ Երկրիս վրայ Եկեղեցին
կը կատարէ Երկնային Եկեղեցւոյ ան-
դամներուն տօնը, որպէսզի փառաբա-
նակից լինին Հրեշտակաց հետ ամե-
նասուրբ Երրորդութեան։

Եղգային ժողովսերը մինչև 15-րդ
դարը սահմանուած են կատարել սրբոց
տօները, վասն զի նոցա մէջ կլինին
այնպիսի անձինք, որոնք իւրեանց
կեանքը Սուրբ Եւետարանի քարոզու-
թեան համար զոհած են կամ նահա-
տակութեամբ կամ ճգնութեամբ կամ
որբակեցութեամբ, ուստի Եկեղեցին կար-
ուցքը է տօն կատարել ամենայն
զադրեր և տօն կատարել ամենայն
յայտից։

Սուրբ Սահմակ և Մեսրոպ ազգա-
սիրական հոգւով վառուած Հայոց ազ-
գին և Եկեղեցւոյն մեծ արդիւնք ցոյց
տուին գտնելով մեր լեզուի նշանագիրը։

Այս գրերով Աստուածաշոնչ զիրքը
թարգմանեցին, յետոյ դպրոցներ բացին
Առամշապոհ թագաւորին օգնութեամ-
բը և շատ աշակերտներ կրթեցին ու-
ղարկելով զանոնք կատարելագործուելու
ուսումը խրեանց ժամանակին յայտնի
եղած լուսաւորեալ օտար, աղջաց բար-
ձրագոյն ուսումնարաններում։ Սոցա-
օրինակին հեաևելով ամենայն եկեղեցա-
կան պարտաւոր է Հոգալ Ազգին և եկե-
ղեցւոյ օգուտոր, բանալ ամենայն տեղ
ուսումնարաններ աղջի զաւակները կրր-
թելու և նոցա միտքը լուսաւորել զա-
նազան ուսմամբը և զիտութեամբը ու
նոցամէ պատրաստել ուսումնական և
բարեկերթ աղջասէր եկեղեցականներ։

Ե.

ԸՆԴԱՆՐԱԿԱՆ ԿԱՄ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՃՈՂՈՎՆԵՐ.

Ժողովներէն առաջինն է Ներեն տի-
եղերական ժողովը, որն որ գումարուե-
ցաւ Մեծն Կոստանդիանոս կայսեր հրա-
մանաւ Քրիստոսի 325 թ. ուր ժողո-
վեցան 318 հայրապետներ և հաստա-
տեցան Որդոյն Աստուծոյ Հօր Աստո-
ծոյ համագոյ լինելը և ծնունդը Հօր
յէռթենէն. և նողովեցին Երիսոր։ Եյս
ժողովոյն մէջ աստուածաբան և ուղ-
ղափառ սուրբ հայրապետները դատա-
պարտեցին Երիսորի հերետիկոսութիւնը
և նզովեցին զինքը, այն տեղ գրեցին ի
միջի այլոց հաւատոյ հանգանակը Հա-
ւատամքը, որմէ մի օրինակ Երիստա-
կեռ Հայրապետը Ա. Գրիգոր Լուսա-
կորչի որդիին Հայաստան բերեց, Ա. Գրի-

գոր զայն ընդունեց և իւր ձեռքովը
յաւելացուց իւր համառօտ հանդանա-
կը իսկ մեք փառաւորեսցուք։ Եյս
ժողովէն այն կըսովորիմք որ սուրբ
Աւետարանին և առաքելական գրոց մեջ
գտնուած խորհրդաւոր զրուածքները
ուղղափառ վարդապետութեամբ պէտք
է ընդունել և մեր խելքէն մտքէն վեր
եղած առարկաներուն սրտով հաւատալ
առանց քննութեան, ինչպէս Որդւոյն
Աստուծոյ ծնունդն ըստ Աստուածու-
թեան և Երրորդութեան խորհրդոյն
և այլք։

Ժ.ՈՂ.ՈՎ. ԵՓԵՍՈՒԹԻ. Եփեսոս քաղաքի Յու-
նաց Կեստոր Պատրիարքը նոր աղանդ
հնարեց, որով Քրիստոսի Աստուածու-
թինը մարդկութենէն կը բաժանէր և
զ.Քրիստոս լոկ մարդ կընդունէր, իսկ
զ.Սուրբ Այսն Մարիամ մարդածին և
ոչ Աստուածածին. այս պատճառաւ
մեծ աղմուկ և խոռվութիւն ընկաւ
Եկեղեցւոյ մէջ։ Կեստորի այս մոլոր
նորահնար քարոզութեան դէմ զինուե-

ցաւ Եղեքսանդրացի Սուրբ Ախորեղ
Հայրապետն, ուստի Թէոդոս Կայսեր
հրամանաւ 200 հայրապետներէ բաղ-
կացած Քրիստոսի 431 թ. տիեզերա-
կան մեծ ժողով կազմուեց, ժողովա-
կաններն հրապարակաւ հիմնովին մեր-
ժեցին Կեստորի աղանդոյն քարո-
զութիւնը և զինքը իւր համախոն կու-
սակիցներուն հետ մէկտեղ դատապար-
տեցին և որոշեցին խոստովանել աս-
տուածային և մարդկային բնութենէ
միացեալ Աստուածային մի Քրիստոս,
մի դէմ և մի անձն Ա. Երրորդեան. իսկ
զ.Սուրբ Այս Մարիամ խոստովանել
Աստուածային։ Եկեղեցւոյս այս ուղղա-
փառ դաւանութիւնը յիշեալ ժողովով
սահմանեցաւ որ Յիսուսի Քրիստոսի
Աստուածային անձին մլ.ջ Երկու բնու-
թենէ Աստուածային և մարդկային ի
մի բնութիւն անշփոթ և անբաժանե-
լի կերպով միացած են և թէ Յիսուս
Քրիստոս Միածին Որդի է Աստուծոյ
և Սուրբ Այս Մարիամն է Աստուա-
ծածին և ոչ մարդածին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՅԱԼ. Յիսուսի Քրիստոսի
իջման ոսկէուռն ձեռքը Վաղարշապատ
քաղաքին մէջ իջնալէ և և այն ուսոին
գետին խփելը, որով գետինը դղբդաց
և չայաստանի Մայր Եկեղեցւոյ Առրր
Էջմիածնայ շնութեան ձեռ լուսաձե
կանզնեցաւ ինչպէս որ տեսաւ Առրր
Դրիգոր Խոսաւորիչ իւր տեսլեան մէջ:
Մենք չայերս կընդունիմք և կը զա
ւանիմք որ այն օրը Քրիստոս Միա
ծին Արդին Եստուծոյ իջաւ երկնքէն և
Եստուածային շողը ծագեցաւ Եկեղեցւոյ
վերայ, ուստի այն տօնն ալ կոչուեցաւ
Շողակաթ: Եյս տօնը մեզ կը սովորու
ցունէ որ չայաստանեայց Եկեղեցւոյ
սուրբ հաւատոյ հիմք երկու անգամ
ինքն Քրիստոս զրաւ, մէյմը մեր Եր
դար թագաւորին վերայ իւր զրած նա
մակովն, մէյմն ալ իւր իջնալովն Եկե
ղեցին լուսեղէն ձևակերպելովը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎ:

Կոստանդնուպոլսոյ Մակեդոն Պատ-
րիարքը Հոգւոյն Սրբոյ գէմ զինուեցաւ
ասելով թէ Հոգին ստացական է և ոչ
անձնաւոր էութիւն. այս նոր աղան-
դին պատճառաւ մեծ խոսվութիւն ծա-
գեցաւ, զորն խաղաղացնելու համար
Մեծն թէոդորոս Կայսեր Հրամանով
ժողով զումարեցաւ Կոստանդնուպոլ-
սոյ մէջ 381 թ. Քրիստոսի, ուր ժո-
ղովեցան 150 հայրապետք նզովեցին
զՄակեդոն, վոնտեցին պատրիարքու-
թենէն զրկեցին բոլոր աստիճաններէն
և մեծ զատապարտութեամբ մերժեցին
նորա աղանդը և սահմանեցին զՀոգին
Առրբ դաւանել ելող բգխող ի չօրէ,
Էակից և փառակից Հօր և Ակդոյ:

Երգար Հայոց թագաւորի իւր ան-
բուժելի հիւանդութեան մէջ լսելով
միայն Քրիստոսի արած հրաշքնե-
րուն համբաւը Երուսաղէմի մէջ, ջեր-

մեղանդ սրտով հաւատաց նորա Աստուածութեան զօրութեանը, որով Քրիստոնէական հաւատոյ լոյսը չայատանի մէջ առաջի անգամ նորա ձեռքովը տարածուեցաւ և այդ պատճառաւ Փրկչի նամակն և անձեռագործ պատկերն ստանալու արժանացաւ, որ ոչ մի ազգ չստացաւ այդ անգին գանձերը, որոնք իսկապէս արդարեւ ազգի պարծանք են:

Քրիստոսի ծնունդէն և Մկրտութենէ առաջ կատարուած տօները կարգադրեր է մեր Խուրբ Յովհան Օձնեցի չայրապետը իբրև վկայք, ծննդեան Քրիստոսի զորս մեր չայոց եկեղեցին չայաստանի առաջին և երկրորդ լուսաւորչաց տօներուն պէս հանդիսաւոր կերպով կը կատարէ:

Երբոր Օաքարիա քահանայն տաճարին մէջ ինսկարկութիւն կանէր, Գաբրիէլ հրեշտակը աւետիս տուաւ նորա որդի ունենալոյն համար: Հրեշտակի աւետիսը ժամանակին կատա-

րուեցաւ, Եղիսաբէթ Զաքարիայի կինը որդի ունեցաւ, ազգականներն հրեշտակի հրամանին հակառակ տղունանը ոչ թէ Յովհաննէս դնել կուզէին, այլ ուրիշ անուն միինչեւ այդժամանակ Զաքարիա համբ էր, ուստի նորա հարցուցին, նա ալ տախտակի վերայ զրեց դորա Անունը ՅՈՎՀԱՆՆԵՍ է իսկոյն լեզուն բացուեցաւ, չոգւով Արբով լեցուած փառք տուաւ Աստուծոյ և օրհնեց: Այս տօնը կը կատարուի Քրիստոսի ծննդեան ութօրէնքին միւս օրը, վեցերորդ դարուն սահմանեցաւ իբրև տօնակատարութիւն:

Հրեշտակի աւետելովը Յովհաննիսի ծնունդը մեծ ուրախութիւն և ցնծութիւն էր Զաքարիայի և Եղիսաբէթի համար: Այս տօնէն ծնողը կը սովորին որ բարի որդիքը Աստուծոյ պարգևը են և ծնողաց համար ուրախութիւն և փառք. Յովհաննիսի նման եկեղեցւոյ գառք. Յովհաննիսի նման եկեղեցւոյ գառք կատարելուն ուրախութեան պատճառաւ կը լինին իւրնանց ծննդ-

եամբը և կեանքովս դեռ պատանեկութեան հասակումը պիտի լեցուին իմաստութեամբ և բարեպաշտական հոգւով որ պատրաստ լինին կատարել սուրբ կարապետի եռանդով Տիրոջ իւրեանց ծառայութիւնը:

Ղեռնդեանց քահանայից և Աարդանանց զօրավարաց տօնը:

Երբ Պարսից մոգեկրօնութիւնը Յաղկերտ թագաւորի ձեռնով կաշխատէր քրիստոնէութիւնը ջնջելու չայաստանի մէջէն. Յովսէփ Կաթուղիկոս, Սահակ եպիսկոպոս Ոշտունի, Ղեռնդ երէց, շատ քահանայք և սարկաւագներ յորդորեցին նախարարներուն և ազգին՝ վառելով նոցա սրտերուն մէջ քրիստոնէական հաւատոյ սէրը մինչև ցկաթիլ արեան պատերազմել կրակապաշտ Պարսից դէմ չայոց հաւատը և եկեղեցին պաշտպանելու համար, ուստի Եւարայր դաշտին մէջ պատերազմեցին Պարսից դէմ: Սուրբ Ղեռնդ քաջալերական խօսքերով վառեց զօրականների սրտե-

ըր, քաջութեամբ պատերազմեցին, քաջութեամբ ընկան և քաջութեան յիշատակ թողին մեզ համար: Թէե յաղթուեցան, սակայն մարտիրոսութեան և նահատակութեան պատկով զարդարեցան և տկարացրին Պարսից ուժը և Քրիստոնէութիւնն և Եւետարանն յաղթեցին կրակին: Ղեռնդ, Աարդան, և շատ նախարարը նահատակուեցան հանգիստ խղճով, իսկ ուրացեալք և մոխրապաշտք կենդանի մեռած էին: Եյս ազգային տօնը մեր եկեղեցին կը կատարէ բարեկենդանի երեքշաբաթի օրը Ղեռնդեանց քահանայից անուամբ: Յոցա օրինակէն պիտի սովորին եկեղեցականք աներկիւղ պաշտպաննել եկեղեցին և կրօնը ամենայն տեսակ աղանդներէ, հերձուածներէ և բռնութիւններէ մինչև վերջի շունչը հաւատարիմ մնալով իւր եկեղեցւոյն և այդ առաքինական ճանտապարհը տանել նաև ժողորդեան յորդորելով և քաջալերելով:

Երբոր Յաղկերտ թագաւորը Սիւ-

եաց Ալասակ անօրէն և ազգուրաց իշխանին ձեռքովը կրակապաշտութիւնը տարածեց Հայաստանի մէջ, Հայոց ուխտապահ Նախարարները Պարսից՝ Վրիստոնէական կրօնի դէմ արած ոճիրները տեսնելով 60,000 հոգի քաջն Ամիկոնեան Արդանայ տպաւինեցան զինքը իրենց զօրագուռի ընտրեցին և զնացին պատերազմի Պարսից դէմ Եւարայի դաշտին Տղմուտ գետի մօտ: Եյդ պատերազմին մէջ Հայոց կողմէն 1036 հոգի մեռան սուրբ Հաւատոյ համար և իւրեանց զօրսպետի անունով ըսուեցան Արդանանք: Այս յիշատակը կը կատարուի բարեկենդանի հինգշարաթի օրը: Եյտ տօնը կը սովորեցնէ մեզ ազգովին պաշտպանել մեր սուրբ Եկեղեցին, Հաւատը և աշխարհային մնոտի փառքերէն և մեծութիւններէն խաբուելով չթուլանալ, չփոխել մեր Հարազատ մայրենի Եկեղեցին և Ալասակների նման մնոտի փառած չըփոխել Հաւատը ազգութիւն և նոցա

պէս յետոյ չմեռնել յուսահատ և զըրկուած թէ՝ մարմնաւոր փառքից և թէ՝ հոգեոր:

Պ Ա. Հ Ք.

ՊՈՀՔՆ է այն բարեպաշտական սովորութիւնը որով մարդիկ պարտաւոր են բերաննին հեռու պտհել ուտեաց կերակուրներէ և ըմպելիքներէ: պահքը առաջի անգամ Եստուած դրաւ տրախտին մէջ, երբ հրամայեց Եղամայ և Եւայի չուտել արգելեալ պտղէն, նոցահնազանդութիւնը և համբերութիւնը փորձելու համար: Տարուան մէջ վեց ամիս պահք նշանակուած է: ա. օրական, շաբաթական քառասնորդական: Յիսնակաց, նաւակատեաց և Եռաջաւորաց:

Օրական պահքը է: Չորեքշարաթի և Արբաթ օրերունը, որ Վրիստոսէն

ևս շատ առաջ են*) զորս սահմանեցին և առաքեալները: Եյս պահքը բոլոր քրիստոնէից եկեղեցները ընդունած են: Քառամորգական որ կասուի մեծ պահք առաքեալները սահմանեցին դարձեալ Քրիստոսի չարչարանաց օրերէն առաջ: որի առաջին պահողն եղաւ Քրիստոս: Եյս պահքը կսկսուի բարեկենդանի կիրակէի երկու շաբաթի օրը մինչև Պազարու Յարութեան շաբաթի ուրբաթ օրը կր շարունակուի իսկ Պազարոսի շաբաթըն մինչև Օատկի շաբաթ երեկոյեան սահմանուած է, ի պատիւ չարչարանց Քրիստոսի, Տրագալոյցը է նաւակատեաց պահք է:

Քրիստոսի ծննդեան պահքը կասուի Յիսոնակաց Ա. Հարց կանոններէն կերեի որ կրօնաւորներն և վանականներն կը պահէին այս պահքը յիսուն օր չորորդ գարումը սահմանուած է: Յունաց եկեղեցին մինչև յայժմ կը պարտաւորեցնէ պահել այս պահքը թէ

*) Պահեմ երկիցս ՚ի շաբաթու.

եկեղեցականաց և աշխարհականաց անխոտիր, իսկ մեր մէջ կը պահին ուժոր ծննդէն առաաջ կրծատելով յիշեալ պահքն:

Տարուան մէջ կայ հինգ նաւակատիկ. Ա. ծննդեան, Ա. արդավառի, վերափոխման և վերացման խաչի, շաբաթապահոց շաբաթ օրերն և Ա. էծի պահոց վերջին շաբաթ օրն: Նաւակատեաց պահքի շաբաթ օրերում եկեղեցին կը հրամայէ միայն ձկնեղէն և կաթնեղէն ուտել Նրէից ազդէն որոշելու ցամար, որք նաւակատեաց տօները զոհագործութեամբ կը կատարէին. Յունաց եկեղեցին նաւակատեաց պահքն չունի: Ըստաջաւորաց պահքը ազգային պահք է որն որ առաջի անգամ Ա. Գրիգոր Լուսաւորիչ խոր վիրապէն ելլելէն ետքը դրաւ, երբ 65 օր շարունակ քրիստոնէութիւնը կը քարոզէր Հայաստանի մէջ, հրամայեց նաև պահք պահէլ իսկ վերջին հինգ օրը ծում պահէլ Տրդատ Ծաղաւորին, ժողովրդոց Աստուծոյ

տուած պատուհասէն ազատելոյն և
չայոց աշխարհին սուրբ հաւատով լու-
սաւորելոյն համար: Տարուան մէջ գրե-
թէ շատ անգամ՝ այս պահքի շաբաթ-
օրը Ա. Արքսի զօրավարին նահատա-
կութեան յիշատակը կը կատարուի, ուս-
տի և կասեն Առւրբ. Արքսի պահք:

ՀԱՅԱԹԱԿԱՆ ՊԱՀՔԵՐՆ ԵՆ. Եղիական
Հոգեգալստեան Ա. Լուսաւորչի գիւտ
նշխարացն Յիսնակի առաջի կիւրակէն.
Ա. Յակովբայ Ա. Խաչի վերացման և
Ա. Արագայ Առւրբ Խաչի. չայոց Եկեղե-
ցին պահոց օրերը սրբոց յիշատակը չը
կատարէր վասն զի տրտմութեան և
ապաշխարութեան օրեր են, միայն Ա.
Լուսաւորչի գիւտ նշխարաց և Ա. Արա-
գայ Խաչի շաբաթները կլինին սրբոց
տօներ:

Ա Ե Բ Զ.

Յ Ե Ա Վ.

1. Տօներու նշանակութիւնը ու բաժանմունքը.
 2. Տէրունական տօներ.
 3. Մարտիրոսաց տօներ.
 4. Ազգային Եկեղեցական.
 5. Աւետումն Ա. Կոյս Մարիամու.
 6. Մկրտութիւն Քրիստոսի.
 7. Թղփատութիւն Քրիստոսի.
 8. Տեսուն լնդ առաջ.
 9. Ծաղկազարդ.
 10. Յիշատակ Ընթրեաց.
 11. Սուրբ Յարութիւն Քրիստոսի.
 12. Համբարձումն Քրիստոսի.
 13. Հոգեգալուստ.
 14. Պայծառակերպութիւն.
 15. Աստուածածնայ տօներ.
 16. Գալուստ ի վերափոխումն Ա. Աստուածածնայ.
 17. Խաչվերացի, Խաչգիւտի, վարագայ Խաչի տօներ.
 18. Եկեղեցւոյ տօներ.
 19. Արրոց տօներ.
 20. Մեծն Ներսէս Հայրապետ.
 21. Թաղէս և Բարդուղիմէսոս.
 22. Դրիգոր Լուսաւորչի տօներ.
 23. Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետաց տօներ.
 24. Սուրբ Սահակ և Մեսորոպ Հայրապետաց տօն.
 25. Տիեզերական ժողովներ.
 26. Ժողով Նիկոյ.
 27. Ժողով Էփեսոսի.
 28. Ժողով Կոստանդնուպոլսոյ.
 29. Արքար Թագաւորի տօնը.
 30. Յովհաննու Մկրտչի ծնունդը.
 31. Ղետնդեսնց քահանայից և Վարդանանց դօրավա-
րաց տօները.
 32. Պահք.
 33. Օրական շաբաթական և քառասնորդական.
 34. Նաւակատիկ.
 35. Յիսնակի.
 36. Առաջաւորաց.
-


825

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ.

Էջ. ՏՈՒ. ՏՊՈՒՄԾԻ.

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ.

- | | |
|-------------------------|-----------------|
| 12. 10. Շփոթեցաւ. | Շփոթեցաւ. |
| 15. Մեսիան. | Մեսիան. |
| 23. 16. Ծաղեկներով. | Ծաղեկներով. |
| 40. 4. Ստութեան. | Ստութեան. |
| 52. 8. Հոկէլ. | Հոկէլ. |
| 55. 10. Քրիստոնէութեան. | Քրիստոնէութիւն. |
| 56. 4. Տնել է. | Դնել է. |
| 59. 8. Նողովեցին. | Նողովեցին. |



ՀՀ Ազգային գրադարան



NL0027577



Շատ առաջնաբուժ զիջումն կը մինի.



Դիմել առ Հեղինակն Ասր-Նախիջևան Մինստ
քահանայ Փախալեան.

